

ԲԱԺԱ ԴՅԱԳՐՈՒԹԻՒՆ
Պուշկար 3 համար
Տարե 6 12 Տր.
Վեցս 6սյ 6 »

Արսասանակի համար
Տարեկան 15 »
Վեցսանեայ 8 »

Ավերիկայի համար
Տարեկան 3 sr,
Վեցսանեայ 1.50 »

ԿԱՆՆԻՍԻՎ ԿՃԱՐԵԼԻ
Նուստանակի սոցիալական
կրթական համար 40 սանթրի.
Կ. իսկ վերջին կրթական համար
20 սանթրի կ. կրթական
ակադեմիայի սանթրի համար
20 ժողովրդական կրթության

Վառնայի համար ձեռք 10 սանթրի

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ ԶՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Նամակ եւ դրու գրկել
Խմբագրության հասցեի

Редакция на вестник
«Шаржумъ»
Варна
Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

Իրաւաւոր եւ չեն տուի

Արսասանակի ձեռք
(20 ՍԱՆԹՐԻՄ)

Պուշկարից համար ձեռք
≈ 15 ՍԱՆԹՐԻՄ ≈

ՇԱՐՋՈՒՄԻ ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ ԿԱՆՆԻՍԻՎ ԿՃԱՐԵԼԻ

ՀԵՐՈՍԻՆ

Բռնկցուցիր գորշ ամպի տակ,
Չքնաղ սարին գագաթէն,
Բոց մը պայծառ, որ սպիտակ
Լոյսը սփռեց դէս ու դէն:

Եւ երբ թնդաց սուրբ հրազէն
Քու—անձնագոհ հերոսին,
Սթափեցանք մեր երազէն,
Մեծ ու պղտիկ միասին:

Ու հայ կոյսը խեղճ ուճանք,
Այնքան լացէ վերջ ունայն,
Այժմ տեսաւ հեշտ հրճուանք,
Նշոյլ յուսոյ հայուն այն:

Ու հայրենեաց փարթամ լեռներ
Ողջոյն տուին իբրբու,
Ձի փրկութեան աւետիսն էր
Որտաք պերճ սարերու:

Բռնկցուցիր գորշ ամպի տակ,
Չքնաղ լեռան գագաթէն,
Բոց մը պայծառ, որ սպիտակ
Լոյսը սփռեց դէս ու դէն:

23 նոյեմբ. Վառնա

ՎԵՏԱ

հայ ժողովրդը ոչ մի օգուտ չունի,
այլ միայն վնաս:

Անդրանիկների երեւան գալը՝
մեր ապստամբական կեանքի մէջ,
ահագին միխթարական երեւոյթէ
և ապացոյց որ հայ ժողովրդը
չեմապէս փարել է ապստամբա-
կան ոգուն, ու այսուհետեւ ոչ
բունակալի հալածանքը, ոչ բարձր
հոգեւորականութեան ստրկական
յորդորները և ոչ էլ ստրկական
տարրի քարոզները չեն կարող
դառն իրականութիւնը և իր
փրկութեան միակ ճամբան ըմ-
բանած հայ ժողովրդին ետ կա-
սեցնել իր մղած կուրսից և նորից
նրան գործել ստրկական թմրու-
թեան մէջ:

Ժողովրդի մէջ ստեղծվել է
ապստամբական այն տարրը, Սե-
րաբեբի և Անդրանիկներ ի նը-
ման. ապստամբական ոգիների
մարմնացումներով, որին առաջ
բերելու համար այսքան տարի-
ներ տքնում էին մեր յեղափո-
խական մարմինները:

Սերաբեբի հայ յեղափոխական
մարմինները իրենց գլխաւոր
նպատակներից մէկին հասել են:
Սյուսը, փոխանակ ապստամբ ան-
հատներ ունենալու, ապստամբ
կատաղի, արիւնի, սրի և հրի
միջով անցած ու փորձված ժո-
ղովրդի ծոցից դուրս եկած թէև
փոքրիկ, այնուամենայնիւ պինդ
զանգվածներ ունեն, Անդրանի-
կի նման ոչ արեստական առաջ-
նորդներով:

Ու այսուհետեւ եթէ մեր ապ-
ստամբական գործը յաջող չը
գնայ, աւելի ընդարձակ ծառայ
չ'ստանայ, դրա ամենագլխաւոր
պատճառներից մէկը պէտք է լի-
նեն մեր յեղափոխական մար-
մինները, եթէ նրանք չը կարո-
ղան կուրսու պատրաստ Հա-
յաստանցի ժողովրդին զէնք և
միայն զէնք հասցնել:

Այսօր Հայաստանի ժողովրդը
միայն զէնքի և գրամի պէտքը
ունի. ու այդ զէնքը և գրամը

պէտք է հայթայթեն մեր յեղա-
փոխական մարմինները. պէտք է
ձեռք բերեն պէտք եղած զէնքը
և գրամը ինչպէս և որտեղից որ
կուզեն:

Վ.Ս.Ր.Պ.

ԱՍ ՇՐՋԱՆԻՆ ՄԷՉ

Ֆիլիպէի երգեցիկ և թատե-
րասէր երիտասարդութիւնը՝ որ
բաւական համեստ անուն մը շի-
նեց հերուան իր առած քանի
մը լաւ քայլերովը, հոկտեմբեր
1էն վերսկսած է իր զբաղումնե-
րը:

Խումբերը այս տարի նախոր-
դէն աւելի կանոնաւոր և արդիւ-
նալից գործունէութիւն մը ունե-
նալու յոյսը կը ներշնչեն մեզի:
Իրենց առաջին հաւաքումնե-
րուն մէջ երկու խումբերու
համար մշակուր են մէկ ծրագիր
—նպատակ ընտրելով իրենց «ժո-
ղովրդական երգեր տարածել և
յաճախ մեր կեանքէն առնուած
բարոյալից ներկայացումներով
ժողովուրդին ճանչցնել իր վի-
ճակը»:

Որպէս զի իրենց գոյութիւնը
պահպանուի, անոնք պատրաս-
տականութիւն յայտնեն են ի-
րենց այդ ծրագրին մէջ — ներ-
կայացումն իր կամ հանդէսներ
տալ — եթէ գիտնու ըլլալ — օգ-
տակար ձեռնար ներու կամ նը-
պատակներու համար, զուտ հա-
սոյթէն պղտիկ գումար մը յատ-
կացնելու պայմանով իրենց, քա-
նի որ խումբերը աս տարի բա-
ւական մեծկակ պիւտճէ մը ըս-
տիպութեան բանալիս պիւտճէին
մէջը չէ դեռ թատրոնական ըզ-
դեսաներու և ուրիշ գոյքերու
անհրաժեշտ պէտքը:

Խումբերու աս պատրաստակա-
նութիւնէն կրնան օգտուիլ ուրե-
մըն ֆիլիպէի զանազան բարե-
նպատակ հաստատութիւնները
կամ ընկերութիւնները:

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Անշուշտ մեր չը վճարող բաժա-
նորդները, եթէ փոքր ինչ պար-
տաճանաշուութեան զգացմունք
ունեն, կարողացին մեր նախորդ
ազգերը որոնցմով կը յայտա-
բարուէր թէ չը վճարող բաժա-
նորդներու անունները պիտի
յայտարարուի Շարժումի մէջ:
Գտնուեցան բաժանորդներ որոնք
չտապեցին իրենց պարտքը վը-
ճարել. իսկ մէկ կարեւոր մասն
ալ դեռ արձագանք չը տուաւ:
Հիմա այդպիսիներուն կը յայ-
տարարենք որ իրենց ժամանակ
կը տրուի մինչեւ դեկտ. 15ը:
Մինչեւ այդ օրը պիտի սպա-
սենք. ու այնուհետեւ իսկոյն
պիտի հրատարակենք:

ՊԱՏՐԻԱՐՔԻ ՄԻՋԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Սուլթանի հրամանով, Օրման-
եան Մշի առաջնորդին պատուի-
րեց տեղական իշխանութեան
աջակցել Անդրանիկին մի կերպ
անձնատուր անել տալու համար.
և Մշի առաջնորդը իր մեծի՝
Օրմանեան պատրիարքի պատուէ-
րի համաձայն մարդ է ուղարկել
Անդրանիկի հետ բանակցելու.
բանակցող տարել է երկու նա-
մակ եւս, սակայն Անդրանիկը
մերժել է անձնատուր լինել:

Անդրանիկը, Տարոնի այդ նոր
առիւծը, որ յիշեցնում է մեզ Թրդ.
դարու Տարոնցի հերոսներին,
գլուխ չէ խոնարհում և հայ
պատրիարքի առջև, որովհետեւ
հաստատապէս համոզված է թէ՛
հայ հոգեւորականը երբ զոնա-
կալի հետ համերաշխարար է
գործում, պարզէ որ գրանից

նան թէ ես անձնասպան լլալու
երբէք պատճառ մը չունիմ. բայց
ինք և իր ոհմակը բարոյական
աշխարհին համար արդէն յաւի-
տենապէս սատկած են. և հիմա
ինձ հետ բոլոր ծանօթներս իրա-
ւունք ունինք հաւատարմ թէ՛
ժամանակէ մը ի վեր, իմ ըն-
թացքիս համար քրոջս. ու քրոջս
ընթացքին համար ինձ և ուրիշ-
ներուն գրուած անստորագիր
նամակները այդ սագաէլին և
իւր լէգէտներն մեքենայութիւն-
ներն են, բայց արդարութիւնը
պիտի յաջողի մէջտեղ հանել
այդքանութիւն մէջ գործող բարո-
յականի ոճրագործները:

Արդ՝ յարգելի խմբագիր կը
խնդրեմ որ բարեհաճիք ներկայս
ասպնջականել ձեր պատուական
թերթին մօտ թիւերէն մէկին
մէջ. կանխաւ ընդունելով յար-
գանաց և շնորհակալեացս հա-
ւաստիքն:

Երուանդ Ն. Գօնչէկիւլլուեան
Ֆիլիպէ 25 նոյեմբ.

402

ՎԱՌՆԱՆԻ ԿՐԹԱՍԷՐ ՀԱՅ
ՀԱՍԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Ազգային երկսեռ վարժարա-
նաց նորնտիր հոգաբարձութիւնս
նկատի ունենալով դպրոցական
ներկայ տարեշրջանի պիտոճէին
անհաւասարակչութիւնը, գի-
մում ըրաւ տեղւոյս պատ. թաղ-
խորհրդին իւր տարեկան վճա-
րելիքը քաղաքի քանակը որոշելու
որպէս զի հոգաբարձութիւնս ալ
ըստ այնմ իր պիտոճէն կատարէ:

Բայց ցաւ իրորտ կըսեմք թէ
պատուարժան թաղական խոր-
խորդը հակառակ իր բերանացի
խոստմանց զոր քանիցս յայտա-
բարձ էր թէ տարեկան 4000
ֆրանք կարող է տալ, այժմ պաշ-
տօնապէս կիմացնէ թէ միմիայն
2300 ֆր. կարոյ է ազգային վար-
ցարանաց յատկացնել, աւելի ոչ
երբէք:

Եւ որովհետեւ ներկայ 1901—
1902 տարեշրջանի համար Ազգ.
վարժարանաց պիտոճէն պատ.
թաղական խորհուրդը նախորդ
տարեշրջանէն մնացած պարտքով
և ծախսերով միասին 8800 ֆր.
ըրած է, մինչդեռ հասոյթը 4300
ֆր. անքի կը հասնի որուն 2300
ֆրանքը թաղականութեան իտա-
լիք դրամն է և մնացեալ 2000
ֆրանքն ալ պիտի գոյանայ երկ-
սեռ աշակերտաց ամուսնոյնակ ե-
րէն, հետեւաբար 4500 ֆրանք
բաց մը կունենայ ներկայ տար-
ուան վարարժանաց պիտոճէն,
որն լրացնելու համար նորնտիր
հոգաբարձութիւնս կուզայ ներ-
կայ կոչով դիմել տեղւոյս պար-
տաճանաչ և կրթասէր պատ. ազ-
գայնոց որպէս զի իւրաքանչիւր
անհատ կամ ընտանիք զգալով իր

առ ազգն ունեցած պարտակա-
նութիւնը, բարեհաճի տաճեկան
վճարել ազգային դպրոցական
տուրք մը, որոյ քանակը ինքն
նուիրատուն հաճին շանակել հոգա-
բարձութեանս կողմանէ վաւե-
րացեալ արձանատեւորին մէջ
զոր անձամբ պիտի ներկայացուի:

Բնական է թէ երբ պատ. ազ-
գայնք իւրեանց վարժարանաց
համար որքան ատատաճեղն և կա-
նոնադրու պէս վճարող լինին հո-
գաբարձութիւնս ալ նոյն
չափով պատրաստ պիտի ըլլայ
աշխատիլ ազգային մանկտիւն թէ
բարոյապէս և թէ մտաւորապէս
հայ կրթելու և դպրոցը այն բար-
ձրութեան վրայ պահել որ միշտ
պատուաբեր ըլլայ (տեղւոյս հայ
գաղութիւն. այս կերպով միայն
Վառնայի հայութիւնը կարող պի-
տի ըլլայ իր ազգութեան քաղա-
քիս մէջ բռնած կարեւոր գիրքը
արդարացնել, ինչպէս իրաւամբ
գիտել տուած է Ֆրանսացի մեծ
բանաստեղծն Վիքթոր Հիւգօ.
ազգ մը տառնց վարժարանի գո-
յութիւն չունի:

Ի գրմաց նորնտիր հոգաբարձ
Ազգ. երկ. վարչարանաց
Ատենադպիր Ատենապետ
Փ. Հալաճեան Տր. Մ. Վարդանեան
Վառնա 27 նոյ.

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Մուշի առաջնորդը պատրիար-
քին հաղորդեք է որ ինք երկու
նստակ և բանակցող մը զրկած
է Անդրանիկի, սակայն Անդրա-
նիկ մերժած է անձնատուր ըլ-
լալ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պոլսոյ միջազգային առողջա-
պահական վարչութեան և թուրք
կառավարութեան միջև կրկին
վէճ ծագեց է:

Բարձրագոյն Գուրը իւր օտար-
երկրեայ ներկայացուցիչներուն
շրջաբերականներ զրկած է ու-
րոնց մէջ մանրամասն պաշտօնա-
կան տեղեկութիւններ կուտայ
Անդրինիկի և իր ապստամբ խըմ-
բի մասին:

Սուլթանը իրատէով մը վաւե-
րացուցած է Պանք Օթոմանի հետ
կնքուած համաձայնութիւնը,
ըստ որում կառավարութիւնը
600,000 թրքական ոսկի կանխա-
վճար պիտի ընդունի:

— Պօլսէն կը հեռագրեն թէ
թուրք կառավարութիւնը գիտ-
մամբ խահեմութեամբ կը վար-
ուէ Անդրանիկի ապստամբ խմբի
հետ, ուղեւով այդ միջադէպին

ազդեցութիւնը կտարնի: Պաշտօ-
նական տեղեկութիւններու հա-
մաձայն տեղական իշխանու-
թիւններու ձեռք առած միջոց-
ները շատ խոհեմ են և կը յու-
սադրեն որ խնդիրը իր տեղին
մէջ պիտի կարգադրուի:

— Իզմիրի առարիական հիւ-
պատոռի վրա թուրք պահապան
մը ատրճանակ արձակեք է անոր
ձուլափը զբօսնած միջոցին: Պա-
հապանը ձերբակուելով յայտնեք
է որ հիւպատոսը մաքսանիւղի
մը տեղ ընդունելուն համար ա-
տրճանակ պարպեք է:

Ատարիական կառավարու-
թիւնը ճնշում կը գործէ թուրք
իշխանութեանց վրայ գործը լաւ
մը քննելու և յանցաւորը պատ-
ժելու համար:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Փէնէրալ Բայոս Բէթրով յայ-
տարարած է որ ինք իւր կու-
սակիցներով փոխառութեան և
ծխախոտի մօնօքօլին հակառակ
քուէ պիտի տան:

Փոխառութեան հակառակ է
նաև ազգային կուսակցութիւնը:

— Սօֆիայի տեղական Մակե-
դոնական կոմիթէն ամսոյս 25ին
նիստ ունեցեք է, այդ նիստի
մէջ որոշեք է Բ. Կօմիթէին կոչ
ընել ամենաշատը մէկ ամսուայ
մէջ գօմիթեները համաժողովի
հրաւիրել. հակառակ պարագային
մայրաքաղաքի կօմիթէն, ինչ-
պէս կեդրոնական գօմիթէ ինքը
պիտի նախաձեռնարկէ համսժո-
ղով գումարելու:

Մինչեւ համաժողովի գումա-
րումը գօմիթէն որոշած է ոչ
մէկ գումար չը յանձնել Մ. Բ.
գօմիթէին:

ԽՄԲԱԿՐՈՒԹԻՒՆ. «ՇԱՐԺՈՒՍ»

Կը սպազբուին ամէն լեզուէ
այցեւորմս, հացցտոմս, նամա-
կագլուխ, հարսանեկան հրաւի-
րագիր, մահազգ:

Գինեքը յոյժ դիւրամտչելի է
Ուրիշ քաղաքներէ եկած
յանձնարարութիւններ ճշդու-
թեամբ և փութով կը կատար-
ուին:

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆՈՒՄ

Ա Ջ Դ

Կը ծախուի 1896ին փետր. 2ին
իշխան Պօրիտի մկրտութեան առթի
սպուած գործածուած նամակագրոյժ
ներ 1—5—15—25 սանդիմ:

Իրմել ՄԵՍՐՈՊ ՄՈՒՐԱՏԵԱՆ
Վառնա

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայցելբերգում հիմնել է մի գրա-
գարան, որ նպատակ է գրել ծանօթա-
ցընել արտասահմանի հայ ուսանո-
ղութեան եւ ընդհանրապէս հետաքր-
քուող անձանց հայոց ներկայ կեան-
քին վերաբերեալ հայերէն եւ օտար
լեզուով լոյս տեսած գրքերի հետ:
Դրագարանը ունի յիշեալ նպատակով
հրատարակած գրքերի մի համետ թիւ-
որի համար յայտնում ենք նուիրա-
տու անձանց մեր խորին շնորհակա-
լութիւնը և խնդրում ենք այն
անձանց հաստատութիւններին,
որոնք կամենում են գրքերով եւ
զւերատուութիւններով օգնել գրա-
գարանին, բարեհաճին ուղարկել
հետեւեալ հասցեով

A. Iohannessian Heidelberg Kaiser 31
Պ 5

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ֆիլիպէի «Հայկական երգեցիկ
խումբը» աս շրջանին մէջ վերս-
կսած ըլլալով արդէն իր պա-
րուպմունքները, ձեռնարկած է
նաև պարբերաբար հրատարա-
կելու եւրոպական ձայնագրու-
թեամբ հայկական հին եւ նոր
քառաձայն երգեր, մաքուր թղ-
թի վրայ, յստակ վիմագիր:

Այս առթիւ երգեցիկ խումբի
վարչութիւնը նորկայիս կը յայտ
նէ Պուլկարիօյ և արտասահմանի
երաժշտասէր հայ երիտասարդու-
թեան, որ եթէ ատ երգերէն
փախագողներ կան, հաճին գի-
մել վարք նշանակուած հասցէին՝
վճարելով «մէկ թուղթին» հա-
մար 20 սանթիմ. փոստի ծախսը
մեր վրայ, կան երգեր որոնք
մէկէ աւելի թուղթերէ կը բաղ-
կանան:

Արտասահմանի համար 35 սնթ.
Ֆիլիպէ վարչ. «Հայկ. երգե-
ցիկ խումբի»

Հասցէ՝ Agop Sivadjan Philippopje

Ա Ջ Դ

Բաղէշի կուսակալութեան պատ-
կանեալ Յուրգափ գիւղէն Պէկօ
Ասատուրեանի, հաստատակազմ
չէկ պէխով ու յօնքերով, 6 ա-
միսէն ի վեր ուր լինելն անյայտ
է զայն եթէ ճանաչողներ կան
յանուն մարդասիրութեան թող
իր այրի տիկին մայրը չմխիթա-
րել հաճին, անոր ուր գտնուիլը
խմբագրութեանս հաղորդելով:

Ա Ջ Դ

Վառնայի ազգային մանկա-
պարտէպին համար կարող ման-
կապարտէպուհի մը կուղուի:
զօհացուցիչ ամսաթուղակ. գիմել
անձամբ կամ նամակաւ անգային
վարժարանաց հոգաբարձութեան:

Отговорникъ:
Мурадъ-Ераносянъ
Печ. Взаимность — Варна